

անշուշտ, անուշադրության արդյունք են և հեշտությամբ կարող էին ուղղվել:

Բառերի տառադարձության մեջ սովորաբար ցույց չի տրվում բառամիջում լավող ք-ն (ծ) ինչպես՝ anjn, atamn, փոխանակ՝ anjon, atamon և այլն: Չէ՞ որ կիրառված է տառադարձություն (տրանսկրիպցիա) և ոչ թե գրադարձություն (տրանսլիտերացիա): Սա «մանրուք» չէ և շատ կարևոր է նման աշխատության համար:

Ինչպես կարելի է նկատել, մեր դիտողությունները ավելի շատ ցանկության բնույթ ունեն՝ ուղղված գիրքը ավելի կատարյալ տեսնելու նպատակին, հնարավոր վերահրատարակության դեպքում: Ի դեպ, որոշակիորեն ղեկավարվում է նրա հայերեն թարգմանության կարիքը:

Դրանով նրա օգտագործումն ավելի մատչելի կդառնա հայերենագիտության մեջ մասնագիտացողների համար:

Բանասիրական գիտությունների դոկտոր է. Գ. Թումանյանն ստեղծել է լուրջ ու արժեքավոր աշխատություն, որի և՛ տեսական, և՛ գործնական նշանակությունն ակնբախ է: Սա հաջորդել է նրա մի քանի ծանրակշիռ մենագրություններին և վկայում է հեղինակի գիտական հետաքրքրությունների լայն շրջանակների, անդադրում աշխատանքի, հետազոտական նշանակալից ծրագրերի մասին: Ուրեմն և հույս է ներշնչում, որ գիտնականը առաջիկայում ևս հանդես կգա հետաքրքրական ու կարևոր ուսումնասիրություններով:

Պրոֆ. Ա. Ա. ԱՅՐԱՆՈՒՄՅԱՆ

Ա. Ա. ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ, Դվին I, կենտրոնական քաղամասի պեղումները 1964—1970 թթ., Երևան, 1976, 115 էջ, գինը 1 ո. 15 կ.:

Միջնադարյան Հայաստանի խոշորագույն քաղաքներից մեկի՝ Դվինի մատենագրական ու նյութական մշակույթի պատմությունը բազմակողմանիորեն ուսումնասիրել է հայագիտության մեծ ելախտավոր, Դվինի արշավախմբի բազմամյա ղեկավար, պրոֆ. Կ. Ղաֆաղարյանը<sup>1</sup>: Լույս են տեսել նաև Դվինին նվիրված մի շարք այլ ուշագրավ աշխատություններ<sup>2</sup>: Այս բոլորով հանդերձ, մինչ այժմ չեն եղել քաղաքի առանձին թաղամասերին նվիրված հետազոտություններ: Ա. Քալանթարյանի գրախոսվող աշ-

խատությունը մասամբ լրացնում է այդ բացը:

Կենտրոնական թաղամասը միջնադարում քաղաքի հոգևոր և նյութական մշակույթի կարևոր օջախն էր: Այնտեղ են եղել տաճարները, կաթողիկոսական պալատները և աշխարհիկ այլ շինություններ:

Ներածության մեջ հակիրճ ներկայացված են պեղված հատվածի զբաղեցրած տարածքը, կառույցների դիրքը, շինարարական առանձնահատկությունները և, վերջապես, տեղանքի բնակեցման ժամանակագրական ճիշտ սահմանները:

Առաջին գլուխը վերաբերում է 1964—1970 թթ. պեղումների մանրամասն նկարագրությանը: Ըստ տարիների ներկայացված են պեղված միավորների հնագիտական արդյունքները (Դվինում այդ միավորներն արտահայտվում են քառակուսիների սիստեմով), տրված է հնագիտական շերտերի խորությունը: Քալանթարյանը նկատում է, որ մինչև 893 թ. երկրաշարժը թաղամասը եղել է քաղաքի ամենախիտ բնակեցված հատվածներից մեկը:

Երկրորդ բաժնում, որ նվիրված է շերտագրությանը, հեղինակը համոզիչ բացատրություններով կարողացել է որոշել կենտրոնական թաղամասի հնագիտական յուրաքանչյուր շերտի խորությունը, նյութական մշակույթի բնույթը: Կաթողիկե եկեղեցու արևմտյան մասում կատարված պեղումների միջոցով Ա. Քալանթարյանին հաջողվել է ապացուցել, որ հնավայրի ամենավերին շերտերը պատկանում են XII—XIII դդ. և գտնվում են խիստ վնասված վիճակում:

1 Կ. Ղաֆաղարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952:

2 Б. А. Шелковников, Художественная керамика двинских раскопок, ԱրմՖԱՆԻ «Տեղեկագիր», 1940, № 4—5: Ն ու յ ն ի՝ Средневековая художественная керамика Ближнего и Дальнего Востока, նույն տեղում, № 6: Ն ու յ ն ի՝ Керамика и стекло из раскопок г. Двина, «Հայաստանի պատմության պետական թանգարանի աշխատություններ», հատ. IV, 1952: Վ. Հ ա ր ու թ յ ու ն յ ա ն, Դվինի V—VII դդ. ճարտարապետական հուշարձանները, Երևան, 1950: Հ. Մ. Ջ ա ն փ ո լ ա դ յ ա ն, Ասյակե փորձանոթներ Դվինի պեղումներից, «Պատմա-բանասիրական հանդես», 1964, № 4: Ն ու յ ն ի՝ Դվինի ապակե իրերի ժողովածուն, նույն տեղում, 1966, № 1: Ն ու յ ն ի՝ Դվինի միջնադարյան ապակին IX—XIII դդ., Երևան, 1974: Х. А. Мушегян, Денежное обращение Двина, Ереван, 1962 և այլն:

Վաղ միջնադարյան (IV—VIII դդ.) շերտերի բացակայությունը գրախոսվող աշխատության մեջ իրավացիորեն պատճառաբանվում է այն իրողությամբ, որ եռանալ բազիլիկ տաճարը, անկասկած, ունեցել է իրեն հարող, ազատ հրապարակ: Հետագայում հիշյալ վայրում կառուցվել է աշխարհիկ մի շինություն, որը կառուցողական հորինվածքով և հնագիտական նյութերի ամբողջությամբ թվագրվում է VIII դարի վերջով և IX դարով: Սակայն այն հարցին, թե ինչու կաթողիկոս եկեղեցուն այդքան մոտիկ է կառուցվել այս մեծ շինությունը, հեղինակը պատասխանում է՝ «անհայտ պատճառներով» (էջ 25): Մեր կարծիքով այդ հարցին կարելի է ավելի որոշակի պատասխան տալ: X դարի արար աշխարհագիր ալ-Խաթահին գրում է, թե գլխավոր մզկիթը գտնվում է եկեղեցու կողքին<sup>3</sup>: Բացառված չէ, որ արաբները, անտեսելով հայկական եկեղեցու կանոնիկ սկզբունքները, մոտակայքում կառուցեին նաև աշխարհիկ շենքեր, որոնցից մեկը, հավանաբար, վերոհիշյալն է:

Աշխատության մեջ բազմակողմանիորեն քննության է առնվում շինարարական ամբողջ համալիրը, ըստ ամենայնի տրվում են շինարարական տեխնիկան, ներքին կառուցվածքը, հարդարանքի առանձնահատկությունները և այլն: Եվ այս բոլորից հեղինակը եզրակացնում է, թե համալիրն իր բնույթով աշխարհիկ է և պարզաբանում է VIII—IX դդ. պատմամշակութային մի շարք կարևոր հարցեր:

Աշխատության երրորդ բաժինը նվիրված է մետաղե առարկաների դասակարգմանը: 1964—1970 թթ. ժամանակամիջոցի պեղումներն ապացուցեցին, որ մետաղը Դվինի բնակչության կենցաղում ունեցել է առաջնահերթ նշանակություն թե՛ խաղաղ և թե՛ ռազմական պայմաններում: Դվինում հայտնաբերված մետաղե առարկաները գրքում տեսակավորված են ըստ գործածության կերպի (ղեկեր, աշխատանքային գործիքներ, զարդեր և այլն): Առանձին դեպքերում այդ իրերը մանրամասնորեն նկարագրվում են, նշվում է գործածության ժամանակը, զուգահեռներ են անցկացվում այլ հուշարձաններից հայտնաբերված մետաղե նյութերի հետ:

Առարկաների այդպիսի խմբավորումը հեղինակին հանգեցնում է այն հետևության, թե իրենց ձևերով և նշանակությամբ մետաղե

առարկաները կտրուկ փոփոխությունների չեն ենթարկվել:

Անշուշտ, աշխատությունը մեծապես կշահեր, եթե վկայակոչված հնագիտական նյութերի հետ ընդգրկվեին նաև ուսումնասիրություններն ու մատենագրական տեղեկությունները:

Խեցեղենին նվիրված բաժնում, ի մի են բերված ինչպես մշակութային շերտերից, այնպես էլ հորերից հայտնաբերված բազմապիսի նյութեր: Խեցեղենը դասակարգված է որոշակի սկզբունքով, առանձին խմբերով և ենթախմբերով: Նրա ուսումնասիրության համար Ա. Քալանթարյանն ընտրել է չափումների մեթոդը: Օրինակ, նա նկատում է, որ IX դարում սափորների համար բնորոշ են եղել հետևյալ չափերը. պսակի տրամագծի հարաբերությունը իրանի ամենալայն մասի տրամագծի հետ կազմում է 1:2,5, պսակի տրամագծի հարաբերությունը հատակի տրամագծի հետ՝ 1:1,3, սափորների բարձրության հարաբերությունը պարանոցի բարձրության հետ՝ 1:0,33: Քննության այսպիսի մեթոդի առավելությունը այն է, որ ստացվում է կայուն մի համակարգ և հետագայում են դառնում տվյալ դարի խեցեղենի բնորոշ առանձնահատկությունները:

Ներկայացված են խեցեղենի տարատեսակները՝ ջնարակածը և հախճապակին: Քանի որ նյութը հայտնաբերվել է ստույգ թվագրվող (VIII—IX դդ.) շերտում, ուստի պարզ են դառնում հատկապես ջնարակած խեցեղենի գունային կոլորիտը, ժամանակի բնորոշ դարձակերը, խեցանոթների կերտվածքը և այլն: Ըստ ամենայնի վերլուծելով հախճապակին, որը հիմնականում ներմուծված է, Ա. Քալանթարյանը հիմնավորում է Դվինի փոխանակային հարաբերությունների մասին գոյություն ունեցող գրավոր տեղեկությունները:

Աշխատության վերջին բաժինը նվիրված է ասյակեզործությանը: Արհեստագործական արտադրության այս ճյուղը լուսաբանված է բազմատեսակ կիրառական նշանակություն ունեցող առարկաների համակողմանի քննությամբ: Պեղումների շնորհիվ ի հայտ եկած իրեղեն գտածոներով հիմնավորվում են մատենագրական վկայություններն այն մասին, որ վաղ միջնա-

<sup>3</sup> СМОМПК, вып. XXIX, Тифлис, 1901, էջ 19:

4 Վ. Արրահամյան, Արհեստները և համբարական կազմակերպությունները Հայաստանում IX—XIII դդ., Երևան, 1946: Ա. Գեվորգյան, Արհեստներն ու կենցաղը հայկական մանրանկարներում, Երևան, 1973, աղ. XV, XVI, XVII, XVIII:

դարում Դվինը եղել է ապակեգործության խոշոր կենտրոն: Աշխատության մեջ ներկայացված են առանձին խմբերի արտադրության տեխնոլոգիայի հետ կապված հարցերը:

Դվինի կենտրոնական թաղամասում հայտնաբերված ապակե հարուստ հավաքածուի մեջ առանձնանում են մի խումբ զամպարներ, որոնք օգտագործվել են եկեղեցու և կաթողիկոսական պալատի շքեղ ջահերի համար: Հեղինակը բնութագրում է դրանց կիրառական հնարավորությունները, ընդգծում ձևերի բազմազանությունը, պատրաստման տեխնիկական հնարները և այլն: Աշխատության ամբողջականությունը կշահեր, եթե այստեղ հիշատակվեին հայ պատ-

միչների<sup>5</sup> վկայություններն այն մասին, որ Դվինի եկեղեցական սպասքը սպառնացող վտանգի ժամանակ պահվում էր թաքստոցներում, և կենտրոնական թաղամասի կոնաձև հորերի մի մասը, որտեղից ի հայտ են եկել զամպարները, նույնպես ծառայել են այդ նպատակին: Գրքում տեղագրված գծանկարները և աղյուսակները մեծ շահով օգնում են նյութի ընկալմանը:

Ա. Ս. ԺԱՄԿՈՉՅԱՆ

5 Ուխտանեսն պիսկոպոս, Պատմութիւն Հայոց, Վաղարշապատ, 1871, էջ 66: «Պատմութիւն Ղևոնդեայ մեծի վարդապետի հայոց», Ս. Պետերբուրգ, 1887, էջ 169:

*Литературные связи. Русско-армянские литературные связи. Исследования и материалы.* Изд. Ереванского университета. Т. 1. Ереван, 1973; т. 2. Ереван, 1977.

Понятие литературных связей вбирает в себя широкий спектр явлений. Им объединяются весьма разные формы контактов. Среди них нет ни одной, которая не была бы отражена в рецензируемых сборниках.

Биографический аспект подробно рассмотрен в статьях Б. М. Овакимяна «М. А. Гамзатов — друг Н. А. Некрасова», В. П. Купченко «М. Волошин и М. Сарьян» и публикации А. А. Саакянц, посвященной воспоминаниям А. С. Эфрон об А. Исаакяне и М. Цветаевой (т. 2). «Итинерарный» аспект ярче всего выступает в этюде «Путевая проза Андрея Белого и его очерк «Армения» (автор Н. А. Гончар, т. 2). По справедливости большое место занимают контакты в форме перевода — в средние века, в XIX—начале XX вв., в советское время. Уделено внимание переводу «в обе стороны» — с армянского на русский и с русского на армянский. Рассматриваются другие формы влияния и рецепции культурных ценностей. Воздействие русских стиховых форм на армянское стихосложение, восприятие Пушкина, Гоголя, Тургенева, Салтыкова-Щедрина, Чехова, Есенина в Армении, армянские связи Короленко, публикация и изучение армянских сказок в Советской России — все вызывает интерес. Находят место типологические сопоставления фольклорных и этнографических фактов, жанровых и метрических форм. Е. А. Алексанян показывает становление армянского критического

реализма в связи с влиянием русской «натуральной школы» (т. 1), становление армянской психологической драмы на фоне новой европейской драматургии Ибсена, Гауптмана, Чехова (т. 2).

Все формы взаимоотношений более или менее тесно переплетаются и в жизни, и в научных работах, им посвященных. Мы выделяем лишь исследовательскую доминанту. Есть, однако, статьи, в которых разные аспекты равно значимы. Такова, например, работа Э. М. Джрбашяна «Горький и Чаренц», в которой контакты двух художников вписаны в историческую обстановку их дней, показаны с точки зрения и типологии их творчества, и восприятия Чаренцем опыта Горького, и перевода Чаренцем прозы и стихов Горького с характеристикой стиховых особенностей оригинала и армянского текста. Приводя запись Е. Чаренца о том, что в 30-е гг. Горький противопоставит шаблону и трафарету в литературе, исследователь показывает острое недовольство армянского поэта тенденциями всеобщего нивелирования художественных индивидуальностей в атмосфере 30-х гг. (т. 1, стр. 172—173).

Почти универсальны — от теории стиха до истории страны — интересы участников издания. Этнография и фольклористика, история средневековой, новой и новейшей литературы, литературная и художественная критика, библиография нашли ме-